ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՋՐԱՌ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան 0010, Վարդանանց փակուղի 8, (6-րդ հարկ), հեռ.՝ 012 74-00-77, էլ. փոստ info@jrar.am

N 740

ք. Երևան

«16» 06 2025 թ.

«ՎԵԳԱՍ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ի
տնօրեն Ժորա Աղայանին
Հասցե՝ ՀՀ ք.Երևան, Բագրատունյաց 2/2
ՀՎՀՀ՝ 01038207
Էլ. հասցե՝ vegasmotors48@gmail.com

Հարգելի՛ պարոն Աղայան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) (այսուհետ՝ Պատվիրատու) և «Վեգաս Մոթորս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Կատարող) միջև 17.03.2025 թվականին կնքվել է N ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԾՁԲ-25/2-1 ծածկագրով պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որով «ՎԵԳԱՍ ՄՈԹՈՐՍ»ՍՊԸ-ն ստանձնել է Պայմանագրով նշված ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի և սահմանված ժամկետների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 781-րդ հոդվածի համաձայն ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի նկատմամբ կիրառվում են կապալի մասին ընդհանուր դրույթները (հոդվածներ 700-727) և կենցաղային կապալի մասին դրույթները (հոդվածներ 728-737), եթե դա չի հակասում սույն օրենսգրքի 777-780 հոդվածներին, ինչպես նաև ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի առանձնահատկություններին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 713-րդ հոդվաի 3-րդ մասի համաձայն եթե աշխատանքի կատարման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի կատարվելու, պատվիրատուն իրավունք ունի ողջամիտ ժամկետ նշանակել կապալառուի կողմից թերությունները վերացնելու համար, և այդ ժամկետում կապալառուի կողմից թերությունները չվերացվելու դեպքում հրաժարվել կապալի պայմանագրից կամ կապալառուի հաշվին աշխատանքի թերությունների վերացնելը հանձնարարել այլ անձանց, ինչպես նաև պահանջել հատուցելու վնասները:

Պայմանագրի 2.1.3 համաձայն պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

Հայտնում ենք, որ 11.05.2025 թվականի իր գրությամբ «ՎԵԳԱՍ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ն տեղեկացրել է, որ ք.Երևան, Նոր-Նորք, Նորք թաղամաս, 1-ին նրբ., 58/2 հասցեից տեղափոխվում է ք.Երևան, Բագրատունյանց 2/2 հասցե,խնդրել է նորոգումը դադարեցնել 30 օրով, ինչին ի պատասխան «Ջրառ» Ընկերությունը չնայած իր 14.05.2025 թվականի 571 գրությամբ նպատակահարմար չի գտել մեքենաների նորոգումները 30 օրով դադարեցնելու, այնուամենայնիվ քննարկումների արդյունքում սպասել է կատարողի կողմից նշված ժամկետի ավարտին և պարբերական ստուգայցեր կատարել, ինչի արդյունքում 13.06.2025 թվականին կազմված ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԾՁԲ-25/2-1 ծածկագրով պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական պայմանագրի շրջանակներում ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման արդյունքների փաստագրման ակտով ակտով արձանագրել է որ Կատարողի՝ նոր հասցե

տեղափոխվելուց հետո իր կողմից մատուցվող ծառայությունները և պայմանները Պայմանագրի շրջանակներում նշված պայմաններին և պահանջվող որակին չեն համապատասխանում և վերջինս հնարավորություն չունի պատշաճ կերպով իրականացնել իր կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունները:

Հարկ է նշել, որ Հանձնաժողովի կողմից Կատարողի սպասարկման հասցեում ուսումնասիրություններ են իրականացվել ինչպես 04.06.2025 թվականին, այնպես էլ 13.06.2025 թվականին: Հանձնաժողովը արձանագրում է, որ 13.06.2025 թվականի դրությամբ 04.06.2025 թվականին ուսումնասիրության արդյունքում արձանագրված թերությունները չեն շտկվել:

Ուստի, ելնելով վերոգրյալը, ուստի առաջարկել է լուծել «Ջրառ» Ընկերության և «Վեգաս Մոթորս» Ընկերության միջև 17.03.2025 թվականին կնքված պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման N ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԾՁԲ-25/2-1 ծածկագրով պայմանագիրը:

Պայմանագրի 2.1 կետի 2.1.3 համաձայն պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

Ուստի ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով, որ «ՎԵԳԱՍ ՄՈԹՈՐՍ» ՍՊ ընկերությունը խախտել է ինչպես Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, այնպես էլ իր կողմից մատնանշված ժամկետը՝ համաձայն Պայմանագրի 3.1 կետի **2.1.3** ենթակետի «ա» պարբերության դրույթով՝ «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունը միակողմանի լուծում է «ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԾՁԲ-25/2-1» ծածկագրով Պայմանագիրը:

Հայտնում ենք, որ «ՎԵԳԱՍ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ի նկատմամբ կկիրառվեն «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և

(կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում ենք, որ Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն ընկերությանը սպասարկող բանկ՝ պայմանագրի և որակավորման ապահովումները գանձելու (ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված 900008000664 և 900008000698 գանձապետական հաշվեհամարներին փոխանցելու) նպատակով:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Ընկերությանը սպասարկող բանկի կողմից «ՎԵԳԱՍ ՄՈԹՈՐՍ» ծածկագրով գնման պայմանագրի տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում ամբողջությամբ վճարվելու դեպքում, անհրաժեշտ է այդ մասին գրավոր տեղեկացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության «Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ կցելով վճարումը հավաստող փաստաթուղթը (անդորրագիրը):

Տեղեկացնում ենք նաև, որ եթե վճարման ենթակա գումարը փոխանցվի ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված հաշվեհամարին, ապա Ընկերության նկատմամբ չեն կիրառվի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված դրույթները և 2-րդ մասի պահանջները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

/ՏՆՕՐԵՆ՝ Ա.Ս. ԱԲԳԱՐՅԱՆ

Կատարող՝ Հ.Բաղդասարյան